

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Անց կացա՛ն...
Օրերս թըռան, ա՛նց կացա՛ն.
Ախ ու վախով, դարդերով
Սիրտըս կերա՛ն, ա՛նց կացա՛ն:

1890

* * *

Վերջացա՛վ...
Կյանքըս մաշվեց, վերջացա՛վ.
Ինչ հույս արի՛ փուչ էլավ,
Ինչ խընդություն՝ վերջը ցա՛վ:

1890

* * *

Հիմի բացե՛լ են հանդես
Երգիչները իմ անտես.
Ջա՛ն, հայրենի ծղրիդներ,
Ո՞վ է լըսում հիմի ձեզ:

Հունիս

1916

* * *

Ե՛տ չեկա՛վ...
Գընա՛ց, գընա՛ց, ետ չեկավ,
Անկուշտ մահին, սև հողին

Գերի մընաց, ե՛տ չեկավ:

Հունիս

1916

* * *

Ո՞ւր կորա՛ն...
Մոտիկներըս ո՞ւր կորա՛ն,
Ինչքան լացի, ձեն ածի՝
Ձեն չի տըվին, լո՛ւտ կորան:

Հունիս

1916

* * *

Երկու դարի արանքում,
Երկու քարի արանքում,
Հոգնել եմ նոր ընկերի
Ու հին ցարի արանքում:

Հունվարի 15

1917

* * *

Ծով է իմ վիշտն, անափ ու խոր,
Լիքն ակունքով հազարավոր.
Իմ զայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը՝ լիքն աստղերով:

Փետրվարի 9

1917

* * *

Քանի՛ մահ կա իմ սրբտում,
Թափուր գահ կա իմ սրբտում.
Չէ՞ դու էլ ես մահացու.—
Մահի ահ կա իմ սրբտում:

Նոյեմբերի 7

1917

* * *

Կյանքից հարբած անցավոր,
Ահա դարձյալ անցավ օր,
Դու վազում ես դեպի մահ —
Մահը բռնում հանցավոր:

Նոյեմբերի 10

1917

* * *

Ե՛տ եկե՛ք...
Գարնան վարար գետ եկե՛ք,
Անցա՛ծ օրեր, խի՛նդ ու սե՛ր,
Դարձե՛ք, իրար հետ եկե՛ք:

Նոյեմբերի 11

1917

* * *

Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մըտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկըսվում է ամեն օր:

Նոյեմբերի 11

1917

* * *

Ջուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ է ինձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում:

Նոյեմբերի 12

1917

* * *

Ո՛վ իմանա՝ ո՛ւր ընկանք,
Քանի օրվա հյուր ընկանք,
Սերն ու սիրտն էլ երբ չըկա՝
Կըրրա՛կ ընկանք, գո՛ւր ընկանք:

Նոյեմբերի 30

1917

* * *

Քանի՛ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տըվել,

Լույս տալով եմ ըսպառվել:

Դեկտեմբերի 24

1917

* * *

Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,—
Վատը՝ լավ եմ տեսել ես:

Դեկտեմբերի 24

1917

* * *

Երագումբս մի մաքի
Մոտբս եկավ հարցմունքի.
— Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...

Դեկտեմբերի 24

1917

* * *

Մընացել է բերդը մեզ,
Հաղթանակի երթը մեզ.
Անց են կացել՝ ով կային,
Հիմի կըզա հերթը մեզ:

Դեկտեմբերի 26

1917

* * *

Հոգիս՝ տանը հաստատվել—
Տիեզերքն է ողջ պատել.
Տիեզերքի տերն եմ ես,
Ո՞վ է արդյոք նրկատել:

Դեկտեմբերի 27

1917

* * *

Ո՛նց է ժրպտում իմ հոգին
Չարին, բարուն,— ամենքին.
Լույս է տալիս ողջ կյանքիս
Ու էն ճամփիս անմեկին:

Հունվարի 4

1918

* * *

Ի՛նչ ես թրռչում, իսն-դև սի՛րտ,
Հազար բանի ետև, սի՛րտ,
Ես ո՞նց հասնեմ հազար տեղ
Քեզ պես թափով, թեթև, սի՛րտ:

Հունվարի 25

1918

* * *

Իմ սո՛ւր, արթուն ականջում
Մի խոր ձեն է միշտ հրնչում,
Անհո՛ւն, անքո՛ւն կարոտով
Իրեն մոտ է ինձ կանչում:

Հունվարի 26

1918

* * *

Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն,
Երագի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

Փետրվարի 2

1918

* * *

Մի հավք գարկի ես մի օր.
Թըռա՛վ, գրնաց վիրավոր:
Թըռչում է միշտ իմ մըտքում
Թևը արնոտ ու մուր:

Փետրվարի 2

1918

* * *

Երկու շիրիմ իրար կից,
Հավերժական լուռ դըրկից,
Թախծում են պաղ ու խորհում
Թե՛ ի՛նչ տարան աշխարհքից:

Փետրվարի 4

1918

* * *

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով՝
— Ջա՛ն, հայրենի անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

Փետրվար

1918

* * *

Աշնան ամպին ու զամպին,
Մոլոր նըստած իր ճըմբին,
Լոռու հանդում՝ մի արտուտ
Նայում է միշտ իմ ճամփին:

Փետրվար

1918

* * *

Կըլթացնում են, արտորում
Արտուտները արտերում,
Թըռչում մանուկ հոգուս հետ,
Ճախրում, ճըխում եթերում:

Հունիս

1918

* * *

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գընում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Նոյեմբեր

1918

* * *

Մեռա՛ն, մեռա՛ն... Եվ ահա,
Խառնըվել են կյանք ու մահ.
Չեմ հասկանում աշխարհքի
«Կան ու չըկան» ես հիմա:

Հոկտեմբեր

1919

* * *

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,
Հեքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն.
Ի՛նչ եմ շինում ես ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...
Ա՛խ, թե նորից գըտնեմ ճամփան, դեպի էնտե՛ղ, դեպի տո՛ւն...

Նոյեմբերի 21

* * *

Քուն թե արթուն՝ օրիս շատը երագ եղավ, անցկացավ,
Երագն էլ, նուրբ ու խուսափուկ, վըռագ եղավ, անցկացավ.
Վըռագ անցան երագ, մուրագ, ու չըհասա ոչ մեկին,
Կյանքըս թեթև տանուլ տըված գըրագ եղավ, անցկացավ:

Դեկտեմբերի 6

1919

* * *

Ո՞ր աշխարհքում ունեմ շատ բան, միտք եմ անում՝ է՞ս, թե էն.
Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, չեմ իմանում՝ է՞ս, թե էն.
Աստված ինքն էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի.
Տանի՛, թողնի՛, — ո՞րն է բարին, ո՞ր սահմանում, է՞ս, թե էն:

Դեկտեմբերի 8

1919

* * *

Կորցըրել եմ, ո՞ւր գըտնեմ,
Տեղըդ իմաց տուր՝ գըտնեմ,
Ման եմ գալի էս մըթնում
Քեզ մոտ գալու դուռ գըտնեմ:

Փետրվարի 4

1920

* * *

Ի՛նչ իմանաս Ըստեղծողի գաղտնիքները անմեկին —
Ընկեր տըվավ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին.

Բանաստեղծին թողեց մենակ, մեն ու մենակ Իրեն պես,
Որ Իրեն պես մըտիկ անի ամեն մեկին ու կյանքին:

Մարտի 30

1920

* * *

Խայամն ասավ իր սիրուհուն. «Ոտըդ ըզգույշ դիր հողին,
Ո՛վ իմանա՝ որ սիրունի բիբն ես կոխում դու հիմի...»
Հե՛յ, ջա՛ն, մենք էլ ըզգույշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի
Էն սիրուհու բի՞բն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի:

Ապրիլ 6

1920

* * *

Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ — իմ կյանքի հետ լինեի.
Հազար երնեկ՝ դաշտում մենակ՝ երկընքի հետ լինեի.
Բայց ո՛վ կըտա էն վայելքը՝ ինքըս ինձ էլ չըզգայի,
Ու հավվեի, ծավավվեի, ամենքի հետ լինեի...

Մայիսի 12

1920

* * *

Լուսը լուսին քո ժպիտն է իմ երեսին ճառագում.
Երբ, ա՛խ, արդեն անբույժ զարկըված, դեպի մահն եմ ես
հակվում,
Էսպես էն վառ արեգակի շողերի տակ կենսածոր
Կայծակնահար կաղնին ոտքի չորանում է օրեցօր:

1920

* * *

Առատ, անհատ՝ Աստծու նրման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես.
Հոգիս ծարավ՝ սրբան-նրբան մըտիկ տալուց հոգնել եմ ես.
Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շրոայլ անհաշիվ,
Ամեն ճամփում ըսպասելուց ու փրնտրելուց հոգնել եմ ես:

Փետրվարի 7

1921

* * *

Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր.
Ես լըսում եմ Նրբա անլուռ կանչն ու հունչը ամենուր.
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր:

Փետրվարի 14

1921

* * *

Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր.
Ես լըսում եմ Նրբա անլուռ կանչն ու հունչը ամենուր.
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր:

Փետրվարի 14

1921

* * *

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,
Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու՝
Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ
Դեպ Արևելքն աստվածային — հայրենիքը իմ հոգու...

Մայիսի 1

1921

* * *

Ամեն անգամ Քո տրվածից երբ մի բան ես Դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ի՛նչքան է դեռ մնում,—
Զարմանում եմ, թե՛ ո՛վ Շըռայլ, ի՛նչքան շատ ես տվել ինձ,
Ի՛նչքան շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից:

Մայիսի 2

1921

* * *

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ.
Ես եղել եմ, կա՛մ, կըլի՛նեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ,
Հազար էսպէս ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ:

1921

* * *

Ասի. «Հենց լոկ էս աճյունն է ու անունը, որ ունեմ...»
Երբ ճառագեց անձայրածիր Քո ժըպիտը հոգուս դեմ.

— Ի՛նչ է աճյունն էդ անկայուն, ու անունը, որ ունես.
Դու Աստվա՛ծ ես, դու անհո՛ւն ես, անանուն ես ու անես...

Մայիսի 6

1921

* * *

Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ,
Մեծ խոհերի խոյանքների հեռուներում անարատ,
Անհիշելի վերհուշերի մըշուշներում նըրբադոս՝
Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կըհասնեմ Նըրա մոտ...

Մայիսի 6

1921

* * *

Բարձր է հընուց աշխարհըն Հայոց ու Մասիսը երկնադետ.
Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել Նըրա հետ —
Անհաս բանից, ըսկզբանից, երբ չըկան էլ դեռ չըկար,
Մինչև վախճանն անվախճանի քընընում է դարե դար:

Մայիսի 21

1921

* * *

Ո՛վ անճառ Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում,
Ամեն կյանքում ու երակում անտես, անկեզ բորբոքում,—
Ողջ ազատ են ու հարազատ էս աշխարհքում Քեզանով,

Ողջը Քո մեջ՝ անմահ, անվերջ՝ Քեզ են երգում Քո ձենով...

Օգոստոսի 3

1921

* * *

Աստծու բանտն են տաճարները — աշխարհքներում բովանդակ.
Իբր էնտեղ է ապրում տերը, պաշտողների փակի տակ:
Հարկավ՝ ազատ նա ժրպտում է ամենուրեք ամենքին,
Բայց դու նայիր խեղճ ու կրքակ մարդու գործին ու խելքին:

Օգոստոսի 25

1921

* * *

Կյանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպըտուղ, անցավ առանց արդյունքի:
Ի՛նչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին...
Ի՛նչ պատասխան պիտի էս տամ հող ու ծաղիկ տըվողին...

Սեպտեմբերի 5

1921

* * *

Իմ կընունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սըրբագան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կընքահայրըս, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կընքողըս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Հոկտեմբեր 21

* * *

Ամեն մի սիրտ ցավով լրցվեց մեր դարում,
 Ցավոտ սրբտով աշխարհ լրցվեց մեր դարում.
 Ցավոտ աշխարհքն եկավ լրցվեց բովանդակ
 Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:

1921

* * *

Աղբյուրները հրնչում են ու անց կենում,
 Ծարավները տենչում են ու անց կենում,
 Ու երջանիկ ակունքներին երագուն՝
 Պոետները կանչում են ու անց կենում:

Հունիսի 9

1922

* * *

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.
 Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.
 Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
 Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

Հուլիսի 8

1922

* * *

Էնքան շատ են ցավերն, ավերն իմ սրբտում,
 Էնքան տրբտում կորած լավերն իմ սրբտում...

Չեմ էլ հիշում չար ու խավար էս ժամին՝
Երբ են փայլել ուրախ օրերն իմ սրբտում:

Հուլիսի 12

1922

* * *

— Էս է, որ կա... Ճիշտ ես ասում. թասըդ բե՛ր:
Էս էլ կերթա՝ հանց երագում, թասըդ բե՛ր:
Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. թասըդ բե՛ր:

Օգոստոսի 14

1922

* * *

Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր.
Անդարձ ու հին ճամփաներ,
Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ւր զընացին, ճամփաներ:

1922

* * *

Հանգել են,
Կըրակներըս հանգել են,
Ցուրտ ու խավար էս գիշեր
Ճըրագներըս հանգել են:

1916

* * *

Չի գալիս
Ականջ եմ դրբել չի գալիս
Ձեն եմ լրսել էս ձորում,
Կըտրել է, էլ չի գալիս:

1916

* * *

[Մինչև էսօր իմ օրում
Մարդ չեմ տեսել էս շորում.
Մարդը մերկ է ու անինչ,
Սիրտ ունի լոկ իր փորում:]

Հունվարի 16

1917

* * *

[Առատ կըլնի կինը արդ,
Կընկնի էգի գինը արդ.
Կբարձրանա նրա տեղ
Ազատ, անկախ կինը մարդ:]

Հունվարի 16

1917

* * *

Ափսոս որ չես տեսնում բնավ
Տագնապն հոգուս խոր ու վեհ...
Հազար անգամ ափսոս ու ցավ,

Որ պիտ տեսնես երբևէ:

1917.I.24

1917

* * *

Ափսոս որ չես տեսնում բնավ
Տազնապն հոգուս խոր ու վեհ...
Հազար անգամ ափսոս ու ցավ,
Որ պիտ տեսնես երբևէ:

1917.I.24

1917

* * *

Իմ ծիտիկը դու հերվան,
Իմ եղնիկը էսօրվան,
Վաղը ինչ ես լինելու...
Ես չեմ գըտնում էնպես բան...

Նոյեմբերի 12

1917

* * *

Քու սերն անխոս խաբեց ինձ,
Խաբեց՝ անթել կապեց ինձ,
Կապեց, անքուն <1 անընթ.> արավ
Անքուն [լափեց] ինձ:

1917

* * *

[Նա մի առյուծ, ես մի գառ
Իմ սրբտի հետ խելագար
Անհավասար կրովի մեջ
Քարշ եմ գալի ես տրկար:]

Հունվարի 25

1918

* * *

Ո՞ւր հեռանաս, կոխած տեղերդ արյունոտ.
Ո՞ւմ մոտ գրնաս, ծանոթդ, ընկերդ արյունոտ.
Ո՞նց մոռանաս էս աշխարհքը [արյունոտ,]
Երգ ես լըսում, լըսած երգերդ արյունոտ:

Հուլիսի 12

1918

* * *

Կյանքն ահա.—
Սընունդ, ծընունդ մինչև մահ.
Մնացածը ողջ նըրանց
Կամ հաճույքն են և կամ ահ:

Օգոստոսի 30

1918

* * *

Աղջիկ Անուշ, երգ Անուշ,—
Մինը կորուստ, ախ ու վուշ,

Մյուսը քրնքուշ ըսփոփանք,
Կյանք ու հրրճվանք, թեն ուշ:

1918

* * *

Մեր գանձերը միշտ կան առատ,
Մեր հաճույքներն անվե՛րջ, անհատ,
Չի հասկանում՝ ո՞նց վայելի,
Դըժգոհ է զուր ամեն մի մարդ:

Փետրվարի 14

1919

* * *

Էնքան եկան, անցկացան,
Ընկան, հանգան, անցկացան.
Երգ ու տաղս էլ ո՞ւր տարան
Չրկան, չըքվան, անցկացան:

Մայիս, 1919

1919

* * *

Թըվում է հար, թե անցյալըս ու ապագաս տեսած կամ,
Առաջ ու ետ անհունությունն — ողջ անպակաս տեսած կամ,
Բայց ո՞նց հիշեմ ամեն տեսած, կամ եղածը հասկանամ,
Եվ անհուն, անհաս տեսած կամ:

1919

* * *

Մանուկ օրից սար ու ձորին ես մնացի մոտ ընկեր,
Աշխատանքի, հանգիստ օրին ես մնացի մոտ ընկեր.
Հեռու ու մոտ սարի վրրի եղբայրներիս ձեն տվի
Ու էն ձենում մեզ բոլորիս — ճանաչեցին մի ընկեր:

1919

* * *

ՄԻՐՏ

Դու գիտես մենակ ճամփեն երկրնքի,
Դու գիտես գաղտնիքն երջանիկ կյանքի,
Դու գիտես ամենն ամենից առաջ,
Քու խոսքն է օրենքն ամեն օրենքի:

1919

* * *

Մեր կյանքը—կարճ մի վերելք,
Անցնել հանգիստ ամեն տանջանք ու վայելք,
Ապրել անախտ, անցնել անհաղթ—հոգիանալ ու նորեն
Նյութից զատված, անմեկ աստված—վերադառնալ դեպ իրեն:

1919

* * *

Ահա շիրիմն... իմ ընկերն էր... մի սովորութք ուներ նա,
Գիշերն արթնում, լույս էր վառում, նստում՝ ժամը իմանա...
Հե՛յ, ի՛նչ անմիտ խոսք է էսօր ժամը կողքին էս շիրմի...
Հե՛յ, անուշ ջա՛ն, ի՛նչ էս հարցնում, ժամի քանիսն է հիմի...

30.I

1920

* * *

Դու մի ճարպիկ մաքսանենգ ես, լոկ ճամփորդ ես ձևանում.
Ու չես ասում՝ մեզնից քեզ հետ ինչ գանձեր ես դուրս տանում:
Ինչ սիրող սիրտ, մարգրիտ վշտեր ու ինչ գոհար երազներ...
Թե իմանան՝ քեզ կբռնեն մեր աշխարհքի սահմանում:

Մայիսի 16

1920

* * *

Ատում եմ քաղաքը՝ դատարկ ու շքեղ.
Ծանր է գալիս ինձ՝ երկիրը ավեր —
Տխուր ու դժար՝ բնությունը մեծ,
Էլ ո՞ւր մնամ ես սիրտըս էլ ավեր...

20.V

1922

* * *

Հե՛յ, Գրիշա, իմ լուսախաչեր, ալեկոծվեց կյանքն էսպես,
Ու նավաբեկ, ու ցավաբեկ հեռվից իրար բերավ մեզ.
Ե՛կ վայելենք էս բախտն անկարծ աղետալի մեր կյանքում,
Քանի դեռ չենք պոկվել, բեկվել նոր հեռավոր հորձանքում:

12 օգոստոս

* * *

Ինչ դալուկ ես քու երկրի պես ու սրգավոր դու էսօր,
Բայց ողջ ու վեհ քան երբևէ, թովիչ ու խոր դու էսօր.
Եղբորըդ մոտ եկած վըշտոտ՝ տանջում ես նոր դու էսօր,
Տանջանք անվերջ իմ սրբտի մեջ ու սեր հըզոր, դու էսօր: